Արձանագրություն N 3
<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/19>> ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27.09.2019թ.
ժամը 09:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Ռ. Ադամյան
Աշ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/19 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 06.09.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ը համատեղ գործունեությանը (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

բ) ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (11.09.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 23.09.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) Ներկայացված 01.02.2018թ. կնքված ՀՀ/ՆՆ-01/18 պայմանագիրը նմանատիպ դիտարկելու համար հարկավոր է ներկայացնել նաև հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր (օրինակ՝ նախագիծ, փորձաքննության դրական եզրակացություն և այլն):

բ) Բացակայում են ներկայացված 18.05.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6 պայմանագրի 7.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ N 3-ի և N 3.1-ի օրինակելի ձևերը (չլրացված):

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 23.09.2019թ. ծանուցվել է Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում (24.09.2019թ. դրությամբ) արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/19 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ը համատեղ գործունեությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/19 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Ռ. Ադամյան

---------- Աշ. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան